Բարձրունի

Բնակչության թիվը՝ 451

Բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում: Այն մարզկենտրոնից հեռու է 45կմ, Երևվանի՝ 220կմ: Գյուղը սահմանամերձ բնակավայր է, Վայքի տարածաշրջանից հեռու է 28կմ, գտնվում է ծովի մակարդակից 1950մ-2050մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է ,ամռանը՝ զով: Տարեկան տեղումների քանակը կազմում է 350-400մմ: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են և չոր տափաստաններ, որոնց մի մասը վերամշակվել են՝ վերածվել կուլտուր- ոռոգելի լանդշաֆտների:

Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին, այն վերաբնակեցվել է 1928 թվականին՝ Արեմտյան Հայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից ներգաղթված հայերով:

Գյուղի կենսագործունեության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Կլիման նպաստավոր է այգեգործության, հացահատիկային, կերային մշակաբույսերի աճեցման համար: Մարդիկ զբաղվում են անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը չեն օգտագործվում սահմանամերձ լինելու պատճառով: